ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ 14/2022

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 16 մայիսի 2022թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հայկուհի Հարությունյանի, Արամայիս Փաշինյանի, Նարեկ Համբարձումյանի, (այսուհետ՝ Հանձնաժողով), 2022 թվականի մայիսի 16-ին, քննելով ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի դատավոր Հարություն Վոլոդյայի Ենոքյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալը «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրում սխալ ներկայացնելու փաստի առթիվ 2022 թվականի մայիսի 13-ի թիվ Ն ՎԻՎ 14/22 որոշմամբ հարուցված վարչական իրավախախտման վերաբերյալ գործը.

ՊԱՐԶԵՑ

1. **Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.**

1.1 Հանձնաժողովը, 2020 թվականի մարտի 25-ին ընդունված «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՕ-199-Ն օրենքի 14-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝

212

«Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածով սահմանված կարգով, իրականացնելով դատավորների հայտարարագրերի վերլուծություն, մասնավորապես, պարզել է, որ Հարություն Վոլոդյայի Ենոքյանը 2021 թվականի մայիսի 17-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում՝ տարեվերջին, հայտարարագրել է 203,212 (երկու հարյուր երեք հազար երկու հարյուր տասներկու) ՀՀ դրամ անկանխիկ դրամական միջոցներ: Մինչդեռ, ՀՀ կենտրոնական բանկից ստացված տեղեկատվության համաձայն՝ Հարություն Ենոքյանի բանկային հաշվին 2020 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ առկա է եղել 439,109 (չորս հարյուր երեսունինը հազար հարյուր ինը) ՀՀ դրամ, ինչի առնչությամբ 2022 թվականի մայիսի 13-ին Հանձնաժողովի որոշմամբ հարուցել է թիվ N ՎԻՎ14/22 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

1.2 2022 թվականի մայիսի 13-ին Հարություն Ենոքյանը հրավիրվել է Հանձնաժողով, վերջինիս բացատրվել են «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները, և նրա մասնակցությամբ կազմվել է վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ ՎԻՎ14/22 արձանագրությունը՝ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով նախատեսված առերևույթ իրավախախտման հատկանիշով:

1.3 Հարություն Ենոքյանի կողմից 2022 թվականի մայիսի 13-ին Հանձնաժողովին է ներկայացվել [redacted] ընկերության կողմից սպասարկվող բանկային հաշվի վերաբերյալ քաղվածք՝ հասատատված բանկի կողմից :

1.4 Վարչական իրավախախտման վերաբերյալ գործի քննությունը նշանակվել է 2022 թվականի մայիսի 16-ին, ինչի կապակցությամբ Հարություն Ենոքյանը պատշաճ ծանուցվել է:

2. Վարույթի մասնակցի բացատրությունը.

Հարություն Ենոքյանը գրավոր բացատրությամբ, մասնավորապես, հայտնել է, որ 29.12.2020 թվականի դրությամբ [redacted] ունեցած իր բանկային հաշվի մնացորդը կազմել է 401.767,30 դրամ, որից հաջորդ օրը՝ 30.12.2020 թվականին, կանխիկացրել է 200.000 ՀՀ դրամ, ինչպես նաև հաշվին նույն օրը մուտքագրվել է 1605,60 ՀՀ դրամ, և ելքագրվել է 160,60 ՀՀ դրամ: Այսպիսով, բանկային հաշվի մնացորդը 30.12.2020 թվականի դրությամբ՝ օրվա վերջում, կազմել է 203.212,30 ՀՀ դրամ, որն էլ նույնությամբ արտացոլվել է Հայտարարագրում:

213

30.12.2020 թվականին կանխիկացրած 200.000 ՀՀ դրամի ձևակերպումն, ըստ բանկային հաշվի քաղվածքի, կատարվել է 08.01.2021 թվականին, հետևաբար այն չի արտացոլվել Կենտրոնական բանկի տվյալներում 31.12.2020 թվականի դրությամբ:

3. Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների համակողմանի քննություն, հաստատված է համարում հետևյալը.

Հարություն Ենոքյանը 2021 թվականի մայիսի 17-ին ներկայացված «Հայտարարատու պաշտոնատար անձի 2020 թվականի գույքի, եկամուտների և շահերի» տարեկան հայտարարագրի (այսուհետ՝ Հայտարարագիր) Բ.6.1 «Բանկային հաշիվների մնացորդներ» բաժնում՝ տարեվերջին հայտարարագրել է 203,212 (երկու հարյուր երեք հազար երկու հարյուր տասներկու) ՀՀ դրամ անկանխիկ դրամական միջոցներ:

4. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը, հիմնավորումները և պատճառաբանությունը.

4.1 Հարություն Ենոքյանը «Հանրային ծառայության մասին» օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի համաձայն հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագրման պարտականություն ունեցող անձ:

4.2 Օրենքի 40-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն՝ հայտարարագիրը ներառում է հայտարարատուին սեփականության իրավունքով պատկանող դրամական միջոցները (այդ թվում՝ բանկում ունեցած), իսկ հոդվածի 3-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ գույքը հայտարարագրելիս նշվում են դրամական միջոցի դեպքում՝ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը, արժույթը: Դրանից բացի՝ նույն հոդվածի 7-րդ մասով նախատեսված է, որ դրամական միջոցի դեպքում տարեկան հայտարարագրում ներառվում են տվյալ տարվա ***հունվարի 1-ի և դեկտեմբերի 31***-ի դրությամբ դրամական միջոցի չափը, ծագման աղբյուրը, տեսակը և արժույթը:

4.3 Օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները:

4.4 «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը քննում և լուծում է հայտարարագրմանն առնչվող խախտումների վերաբերյալ գործեր:

4.5 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

4.6 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 252-րդ հոդվածի համաձայն՝ մարմինը (պաշտոնատար անձը) **ապացույցները գնահատում է իր ներքին համոզմունքով, որը հիմնված է գործի՝ իրենց ամբողջությամբ վերցված բոլոր հանգամանքների համակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա**, ղեկավարվելով օրենքով և իրավագիտակցությամբ:

4.7 «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ վարչական մարմինը պարտավոր է ապահովել փաստական հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ քննարկումը՝ բացահայտելով գործի բոլոր, ***այդ թվում՝ վարույթի մասնակիցների օգտին առկա հանգամանքները:***

4.8 «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքով 247-րդ հոդվածով սահմանված իրավանորմի համաձայն՝ *վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը չի կարող սկսվել, իսկ սկսվածը ենթակա է կարճման* նույն հոդվածի 1-ին կետով սահմանված հանգամանքների դեպքում, այն է՝ ***վարչական իրավախախտման դեպքի*** կամ կազմի ***բացակայությունը***:

Հանձնաժողովը, համադրելով գործում առկա փաստական հանգամանքները, դրանց նկատմամբ կիրառելի իրավական նորմերի պահանջների հետ, հաստատված էհամարում, որ իրավախախտան դեպքը բացակայում է հետևյալ պատճառաբանությամբ.

՝՝՝ ընկերության կողմից Հարություն Ենոքյանի անվամբ սպասարկվող բանկային հաշվի քաղվածքում առկա տվյալների համաձայն՝ հաշվում առկա դրամական միջոցների ելքեր են կատարվել 30.12.2020 թվականին (200.000 ՀՀ դրամ, 160,60 ՀՀ դրամ), ինչպես նաև մուտքագրվել է 1605,60 (հազար վեց հարյուր հինգ դրամ վաթսուն լումա) ՀՀ դրամ, որոնց վերաբերյալ քաղվածքում համապատասխանաբար առկա ձևակերպումների (հաշվարկի ապահովման) ամսաթիվ է նշված 08.01.2021 թվականը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 22-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով,Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 247-րդ հոդվածով, Հանձնաժողովը

115

Ո Ր Ո Շ Ե Ց

1. 2022 թվականի մայիսի 13-ի հարուցված վարչական իրավախախտումների վերաբերյալ N ՎԻՎ14/22 գործի վարույթը կարճել՝ իրավախախտման դեպքի բացակայության հիմքով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հարություն Ենոքյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ